Ս.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՒԱՏՆԵՑԻՆ Կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Երբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Նախագահի Հանրապետութեան Միացեալ Նահանգաց ՅԱմերիկա ՎՈՒԴՐՈՅ ՈՒԻԼՍՈՆԻ խնդալ ի Տէր եւ կեալ զօրացեալ ըստ հանապազօրեայ աղօթից Մերոց եւ ողջունիլ ի Հայրապետական Աթոռոյս Հայաստանեայցս հանուրց՝ ի Սուրբ Էջմիածնէ.

Տէր Նախագահ.

Ունել ունիմք շնորհս առաջի Քեր՝ զոլ յայտարար զոհաբանական մաղթանաց փոքու հօտին Մերոյ, որ ի սփիւռս աշխարհիս առ ընտրեալդ Պետ Մեծի Ազգիդ վասն բազում երախտեացն զոր մարդասիրութեամբ Քերով

ոչ անխայեցիք առ ցրուեալ Հօտն Մեր, յանԶրախս անապատին հարաւոյ և ձեռս եռուք յօշնականութիւն տկարացն ի գիւս հացի և կենաց, ապա ուրեմն հաւատոց, որ ի Քրիստոս, յոր նահատակեցան արեամբ նահատակաց սրբոցն՝ որդիք Մեր ի սրոյ անօրինաց։

Որքա՛ն և այրիք, ծերք և մանկունք, հարտունք նորատիք և կուսանք մատաղ՝ զրկեալ յամենայն ընչից և ի սիրելեաց իւրեանց, խառատաճարակք և հիւծեալք ի մարմին և ի հոգի համբարձցեն զձեռս յաղօթս, զի զօրալիգ Ձեզ երիցի Տէր ի ձեռնարկութեան Ձերում առ ի պաշտպանել Ձեր արդար դատաստանաւ զկորուսեալսն յորդւոց Մերոց և զորս ի կենդանութեան են ի տագնապի մեծի, զի կեցցեն ի նժդեհութեան իւրեանց յապահով վիճակի ի խնամն Ձեր և ազգաց ազատարարաց և անդրբէն դարձցին ի յարկս բնակութեանց իւրեանց։

Եւ Մեք կցորդ եղեալ աղօթից որդւոց Մերոց ապաչեմք առ Տէրն ամենեցուն, զի զթութեամբ մարդասիրութեան Ձերոյ և ազնիւ ազինդ մի պակասեցի առ աշխարհս մեր աւերակ և մի ջքեալ թողցին որդիք Մեր ընդ խշտանութեամբ չարին, այլ փրկեալ ազատագրեցին օգնականութեամբ Ձերով և ազատարարաց Մերոյ ի լծոյ բռնութեան անօրինաց, առ ի ընթանալ նոր կենցաղա-

վարուքթեամբ ըստ շաւղաց ազգաց արեւմտեայց և առաջնորդեալք ի լոյս ընդ Հովանեաւ Մայր Աթոռոյս՝ Մօրն իւրեանց և Եկեղեցւոյս Մերոյ Առաքելականի։

Ողջ լերուք, զօրացեալ ի շնորհս և յօգնականութիւն Տեառն և օրհնեալք ի Մէնջ յաւէտ. Ամէն.

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 10/23 ապրիլի 1916 ամի
Ըստ Տոմարիս ՌՅԿԵ
ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
յԱրարատեան Մայր Աթոռս ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 914

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Ամերիկայի Բուէնոս-Այրէսի «Հայ Կանանց Որբախնամ Ընկերութեան» յօգուտ հայ որբերի փոխադրած երեք հարիւր (300) ռուբլին։ 2 յունուարի։ Թ. 3։

Կոնդակ օրհնութեան Եգիպտոսի Առաջնորդի։ Որբախնամ և Կարմիր-Խաչի Ընկերութիւնների անունով հայ փախստականի որբերի ի մի ժողովելու և նոցա պահպանելու համար։ 2 յունուարի։ Թ. 4։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Օտտաւրոպոլի Հայոց Կոմիտէի փոխադրած յօգուտ Կարնոյ գաղթականների մի հազար (1000) ռուբլին։ որ պիտի ուղարկուի Զաւէն վարդապետին։ 3 յուն.։ Թ. 5։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Ղարարագի Հ. Կոնսիստորիայի կողմից փոթորկից